ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/13815-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-797-15.03.2024-ՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 345 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Աննա Սահակյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
Հեռ. 010515826
Էլ փոստ՝ anna.sahakyan@gov.am

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-797-15.03.2024-ՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-797-15.03.2024-ՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» 2001 թվականի հունիսի 24-ի ՀՕ-200 օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ 11-րդ հոդվածից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 11.1-ին հոդվածով.

«Հոդված 11.1. 2014 թվականի Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ նշվում է օգոստոսի 3-ին:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքում բացակայում է որեւէ կարգավորում 2014թ. Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի վերաբերյալ, նույն օրենքի 15.1-ին հոդվածի համաձայն՝ Ցեղասպանությունների դատապարտման եւ կանխարգելման օրը նշվում է դեկտեմբերի 9-ին:

Հարկ է նկատել, որ հայ ժողովրդի հետ դարեր շարունակ ապրող եզդի ազգի նկատմամբ 2014թ. «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման կողմից կատարված ցեղասպանության դրսեւորումը՝ որպես առանձին հիշատակի օր նշելը եւ այն առանձնացնելը՝ հայ ժողովրդի հետ համատեղ համընդհանուր թշնամու դեմ պայքար մղած ՀՀ ամենամեծ ազգային փոքրամասնության՝ եզդիների նկատմամբ համերաշխության լրացուցիչ դրսեւորում է, որը կունենա եւ՛ կանխարգելիչ, եւ՛ ըստ էության դատապարտող նշանակություն:

Խնդիրն առավել արդիական է դառնում նաեւ այն առումով, որ վերջին ժամանակահատվածում նոր թափ է ստացել եզդի ժողովրդի նկատմամբ կատարված ցեղասպանությունը ճանաչելու գործընթացը, մասնավորապես՝ 2023թ. հունվարին Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը միացավ հանուն պատմական արդարության վերականգնման պայքարին՝ ճանաչելով եւ դատապարտելով 2014 թվականի Սինջարի եզդիների ցեղասպանությունը:

2023թ. օգոստոսի 1-ին Մեծ Բրիտանիան ճանաչել է «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման կողմից եզդիների դեմ իրականացված ցեղասպանությունը: Մեծ Բրիտանիայի որոշումը հետեւել է Գերմանիայի արդարադատության դաշնային դատարանի որոշմանը, որն Իսլամական Պետության նախկին մարտիկին մեղավոր է ճանաչել ցեղասպանության եւ ռազմական հանցագործությունների համար: Իսկ Հայաստանի խորհրդարանը 2014թ. եզդի ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչել է դեռեւս 2018թ. հունվարին:

Հատկանշական է, որ մի շարք երկրներ իրավական ակտերով (նախագահի հրամանագիր, խորհրդարանական բանաձեւ, խորհրդարանական հայտարարություն) կարգավորել են Ապրիլի 24-ը՝ որպես հայոց ցեղասպանության օր հիշատակելու հանգամանքը: Հունաստանը եւ Արգենտինան նույնիսկ օրենսդրական լուծում են տվել խնդրին:

1996թ. ապրիլի 25-ին Հունաստանի խորհրդարանն ընդունել է օրենք՝ «Ապրիլի 24-ը՝ որպես Թուրքիայի կողմից հայոց ցեղասպանության հիշատակի օր ճանաչելու» վերաբերյալ:

2007թ. հունվարի 15-ին Արգենտինայի Կոնգրեսն ընդունել է օրենք՝ «Մարդկանց միջեւ հանդուրժողականության եւ հարգանքի ակցիայի օր»՝ ի հիշատակ հայ ժողովրդի ցեղասպանության:

Պետք է արձանագրել, որ դիցուք՝ Արգենտինայում հայերը՝ լինելով ազգային փոքրամասնություն, այդ երկրի հետ պատմամշակութային այնքան սերտ կապ չունեն, որքան եզդիները՝ Հայաստանի. երկու եղբայրական ժողովուրդների միջեւ հարաբերությունները հիմնված են ամուր պատմական հարաբերությունների վրա:

Նորանկախ Հայաստանի Հանրապետության պատմության ողջ ընթացքում եւս, ամենադժվարին պահերին եզդիները թեւ ու թիկունք են եղել հայ ժողովրդին. Արցախյան ազատամարտի, Ապրիլյան պատերազմի, 44-օրյա պատերազմի ժամանակ տասնյակ եզդիներ իրենց կյանքն են տվել հանուն Հայաստանի Հանրապետության հետագա գոյության:

Առաջարկվող օրենսդրական նախաձեռնության նպատակն է լրացնել «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքը համապատասխան կարգավորմամբ, որը պայմանավորված է եզդի ժողովրդի հանդեպ տեղի ունեցած ցեղասպանության հիշատակման անհրաժեշտությամբ, հասարակության լայն շրջանակների կողմից այս մարդկային աղետի վերաբերյալ տեղեկացվածության առավել բարձրացմամբ, ինչպես նաեւ նախատեսելով համապատասխան կարգավորում՝ առավել կարեւորելու նման ծանր հանցագործությունների բացառումը՝ հարգանքի տուրք մատուցելով անմեղ զոհերի հիշատակին:

ՀՀ տոների եւ հիշատակի օրերի ցանկում ներառելով 2014թ. Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 56-րդ հոդվածով սահմանված ազգային եւ էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքի առաջնահերթությունը, մենք կնպաստենք, որ ՀՀ քաղաքացիները եւս մեկ առիթ ունենան ուշադրություն դարձնելու մարդկության առջեւ ծառացած խնդիրներին եւ մասնավորապես նշված օրը վշտակցեն իրենց հետ բնակվող ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին, իսկ եզդի ազգի ներկայացուցիչները կօգտվեն առավել արդյունավետ գործիքակազմից՝ նշելու 2014թ. Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օրը:

2. **Առաջարկվող կարգավորման բնույթը**

«Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 11.1-ին հոդվածով.

«Հոդված 11.1. 2014 թվականի Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ նշվում է օգոստոսի 3-ին:»:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք

«Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը մշակվել է ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուստամ Բաքոյանի կողմից:

Նախագիծը քննարկվել է Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հարություն Մարությանի, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն պ.գ.թ. Վահրամ Պետրոսյանի հետ եւ արժանացել է վերջիններիս հավանությանը:

4. Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվող արդյունքը

Ելնելով «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածից, ըստ որի՝ Կողմերը պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը մշակութային, հասարակական եւ տնտեսական կյանքում, ինչպես նաեւ պետական գործունեության մեջ, մասնավորապես, իրենց առնչվող հարցերում ապահովելու համար, «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ պատժելու մասին» կոնվենցիայի 1-ին հոդվածից, ըստ որի՝ պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել եւ պատժել այն կատարելու համար, հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես ժողովրդավարական պետության եւ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը Սահմանադրության 56-րդ հոդվածով հռչակած երկրի, առնվազն բարոյական պարտավորությունն է նախատեսել համապատասխան կարգավորումներ, որով Հայաստանի Հանրապետության լիիրավ քաղաքացիներ համարվող եւ Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության անվտանգության ապահովման գործում մեծ ներդրում ունեցած եզդի ազգի ներկայացուցիչները հնարավորություն կունենան առավել արդյունավետ գործիքակազմի կիրառմամբ նշելու 2014թ. Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 345 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-797-15.03.2024-ՄԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ